## Հայտարարություն <<ՄԱՐԳԱՐԱՅԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար

15.02.2021

Տիպ՝ Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմնի ղեկավարների թափուր պաշտոններ
Հայտատու՝ Մարգարայի համանքապետարան
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 26.03.2020թ.-ի թիվ 02-Ն հրաման
ՀՀ Արմավիրի մարզի Մարգարայի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ համայնքի <<ՄԱՐԳԱՐԱՅԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար
1.ՀՀ Արմավիրի մարզի Մարգարա համայնքի <<ՄԱՐԳԱՐԱՅԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-ի տնօրենը
ա )իրականացնում է նախադպրոցական ուսումնական հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը.
բ ) պատասխանատու է նախադպրոցական կրթության պետական չափորոշչին և համապատասխան տարիքային խմբի ծրագրերին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման համար: գ )պատասխանատու է հաստատություն հաճախող սաների առողջության պահպանման,կադրերի ընտրության Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջների պահպանման համար,ինչպես նաև օրենքով և համապատասխան կազմակերպության կանոնադրության սահմանված այլ պարտավորությունների ապահովման համար
դ ) լիազոր մարմին է ներկայացնում նախադպրոցական ուսումնական հաստատության ֆինանսատնտեսական հաշվետվությունը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը.
ե )կազմում է ուսումնական հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և ներկայացնում համապատասխան լիազորված մարմնի հաստատմանը. զ ) լիազոր մարմնի հավանությանն է ներկայացնում նախադպրոցական ուսումնական հաստատության զարգացման ծրագիրը կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած ձևաչափի և պահանջների համաձայն է )իրականացնում է օրենքով և նախադպրոցական ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:
Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող ,,հայերենին տիրապետող ,18տարին լրացած Հայաստանի Հանրապետության այն գործունակ քաղաքացիները ովքեր ունեն ՝
1 ) բարձրագույն կրթություն
2 )հանրային ծառայության առնվազն 5 տարվա ստաժ կամ 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ՝հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշման 9-րդ կետով սահմանված պահանջները
3 )<<Նախադպրոցական կրթության մասին >>Հայաստանի Հանրապետության

օրենքի 19-րդ հոդվածով սահմանված չափանիշները բավարարող անձը
4 )Տնօրենի պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրության և այլ իրավական ակտեր )
Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են
1 )տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն
2 )ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն
3 )համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն
4 )աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ
5 )ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն
6 )առնվազն մեկ օտար լեզվի իմացություն
Մրցույթին մասնակցելու համար դիմող ՀՀ քաղաքացիները Մարգարայի համայնքապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը
1 )դիմում
2 )մեկ լուսանկար 3x4 չափսի
3 )քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին
4 )ինքնակենսագրություն
5 )անձնագրի ,բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք ՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրված վկայականի )պատճենները
6 )տեղեկանք մշտական բնակության վայրից
7 )հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում )
Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը ով ՝
1 )դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ
2 )տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևե մեկով
3 )օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն
4 )դատապարտվել է հանցագործության կատարման համար և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ
5 )զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից կամ օրենքի համաձայն արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել:
6 )Ներկայացրել է փաստաթղթեր ,որոնք չեն համապատասխանում սահմանված պահանջներին,լրիվ չեն կամ թերի են:
7 ) 65 տարին լրացած քաղաքացիները
Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀքշ քաղաքացիներ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Մարգարայի համայնքապետարան (հասցե՝գ.Մարգարա 5փ.2շ հեռախոս 09341 92 21)
Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10-ից մինչև 18:00-ն բացի շաբաթ և

կիրակի օրերից:Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2021թվականի մարտի 16-ին ժամը 12:00-ին Մարգարայի համայնքապետարանի շենքում:Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2021թվականի մարտի 5-ը ժամը 18:00-ն:

**Հասցե՝** Արմավիրի մարզ գ. Մարգարա 5փ.2շ
**Հեռ.՝** 093419221
**Վեբ կայք՝** margara.armavir@mta.gov.am
**Էլ. փոստ՝** margaragp@mail.ru